



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

« 22 » ապրիլի 2019 թ.

N 93-Ա

**«ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ
ՍՈՒՔՍԻԴԱՎՈՐՄԱՆ» ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ
ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 7-ի N 184-Լ որոշման հավելվածի 15-րդ կետի 9-րդ ենթակետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 հունիսի 11-ի N 742-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

1. Հաստատել «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագրով նախատեսված հավաստագրման կարգը համաձայն հավելվածի:
2. Ընդունել ի գիտություն, որ «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագրով նախատեսված հավաստագրման կարգի 9-րդ կետի գործողությունը դադարեցվում է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության Գիտության և խորհրդատվության վարչության կազմավորումից մեկ ամիս հետո:
3. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի տեղակալ Ա. Քամայանին:

ԳԵՂԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

ԿԱՐԳ

գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի հավաստագրման

1. Սույն կարգով կանոնակարգվում է Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրին (այսուհետ Ծրագիր) մասնակցելու համար նախապայման հանդիսացող հավաստագրի (այսուհետ Հավաստագիր) տրամադրման գործընթացը:
Սույն կարգը տարածվում է Ծրագրին մասնակցելու ցանկություն հայտնող տնտեսավարողների վրա:
2. Ծրագրին մասնակցելու համար տնտեսավարողը դիմում է Ֆինանսական կառույցին: Ֆինանսական կառույցը շաբաթական կտրվածքով էլեկտրոնային ձևաչափով նախնական համաձայնեցված ցուցակը ուղարկում է ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (այսուհետ՝ Նախարարություն):
3. Նախարարության համապատասխան ստորաբաժանումը առավելագույնը 5 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է տնտեսավարողին՝ կազմակերպվող խորհրդատվական դասընթացներին մասնակցելու ժամանակացույցի վերաբերյալ: Դասընթացները կազմակերպվում են տնտեսավարողին տեղեկացնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:
4. Դասընթացի ավարտից հետո հնգօրյա ժամկետում տնտեսավարողին հանձնվում է նախարարության կողմից կնիքված հավաստագիր՝ դասընթացին ամբողջությամբ մասնակցելու և ծրագիրը հաջողությամբ ներկայացնելու դեպքում:
5. Նախարարության կողմից կազմակերպվող դասընթացներին տնտեսավարողները՝ անկախ նրանց բնակության կամ գործունեության իրականացման վայրից, կարող են մասնակցել տարբեր մարզերում կազմակերպվող դասընթացներին:
6. Հավաստագիրը ունի վավերության 1 տարվա ժամկետ:
7. Հավաստագրի տրամադրումը մերժվում է, եթե տնտեսավարողի կողմից նախատեսվող գործունեությունը հակասում է Ծրագրի նպատակներին կամ տնտեսավարողը չի մասնակցում դասընթացներին:
8. Հավաստագրի տրամադրման մերժումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենքով սահմանված կարգով:
9. Մինչև Նախարարության գիտության և խորհրդատվության վարչության ձևավորումը հավաստագիրը տրամադրվում է հետևյալ ընթացակարգով:

- 1) Ֆինանսական կառույցը շաբաթական կտրվածքով՝ ըստ հայտերի ներկայացման ժամանակագրության, էլեկտրոնային ձևաչափով Նախարարություն է ներկայացնում Ծրագրի պահանջներին համապատասխանող և հավանական վարկառու հանդիսացող հայտատուների ցանկը,
- 2) Նախարարությունը ֆինանսական կառույցի կողմից ներկայացված ցանկում նշված հայտատուներին ընդգրկում է հավաստագրի տրամադրման համար նախատեսված դասընթացների մասնակիցների ցուցակում և 5 աշխատանքային օրվա ընթացքում հավաստագրված տնտեսավարողների ցուցակը ներկայացվում է ֆինանսական կառույցին,
- 3) Նախարարության գիտության և խորհրդատվության վարչության ձևավորումից հետո 3 շաբաթվա ընթացքում կապի ցանկացած միջոցով՝ ըստ հայտատուների ներկայացման տեղեկատվության, հայտնում է հայտատուներին դասընթացներին մասնակցելու ժամանակացույցի վերաբերյալ,
- 4) սույն կարգի 9-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված դասընթացների ավարտից հետո հայտատուներին տրամադրվում է հավաստագրի թղթային տարբերակը, որը հայտատուն ստանալուց հետո եռօրյա ժամկետում ներկայացնում է ֆինանսական կառույցին, որին դիմել է վարկավորման նպատակով: